

«16» նոյեմբեր 2020թ.

No 4022 - Լ

«ՈՒՄԻԼՈՆ (ԽՆԱՄՔ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Ումիլոն (խնամք)» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ՈՒՄԻԼՈՆ (ԽՆԱՄՔ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ումիլոն (խնամք)» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է անգույնից մինչև բաց դեղին գույնի, թեթև բնորոշ հոտով, կիրառման համար պատրաստի, առանց կողմնակի խառնուրդների, համասեռ միաֆազ լուծույթ: Որպես ազդող նյութ՝ պարունակում է ֆենօքսիէթանոլ՝ 0,4 %, մակերեսային ակտիվ նյութերի, հակամանրէային և խնամող բաղադրիչների (ալանտոին, կամֆորա, մենթոլ, ֆարնեզոլ, պրոպանոլ-2, Դ-պանտենոլ, երիցուկի և ծիծեռնախոտի մզվածքներ, էթիլհեքսիլգլիցերին, գլիցերին, լիմոնաթթու, էթիլենդիամին տետրաքաջախաթթվային երկնատրիումական աղ) համալիր: Միջոցի pH՝ $5,5 \pm 0,5$:

2. Միջոցը թողարկվում է.

1) 0,05-ից մինչև 1 դմ³ ծավալով պոլիմերային տարաներով՝ փրփուր առաջացման, դոզավորման գլխադիրներով կամ սերտ ներպտուտակվող կափարիչներով (1 չափաբաժինը փրփուրառաջացման գլխադիրի սեղմման ժամանակ 0,75 գ, դոզատորի սեղմման ժամանակ՝ 1,5 գ),

2) 5-ից մինչև 200 դմ³ ծավալով ներպտուտակվող կափարիչով պոլիմերային տարաներով,

3) Անհատական հերմետիկ բազմաշերտ փաթեթավորումով անձեռոցիկներ՝ 10×10 սմ-ից մինչև 20×20 սմ տարբեր չափերի, 40 - 60 գ/մ³ խտությամբ, ոչ գործվածքային մեկ անձեռոցիկի համար միջոցի 5-ից մինչև 15 գ տոգորման քանակությամբ,

4) Պոլիմերային տարայով՝ 10×10 սմ-ից մինչև 20×20 սմ չափի 40 - 60 գ/մ³ խտությամբ ոչ գործվածքային մեկ անձեռոցիկի համար միջոցի 5-ից մինչև 15 գ տոգորման քանակությամբ, անձեռոցիկների (50-ից 200 հատ) ծակոտկեն գլանափաթեթի տեսքով՝ հերմետիկությունն ապահովող, ինչպես նաև՝ մեկ անձեռոցիկ հանելու համար կափարիչ ունեցող պոլիմերային բանկայում:

3. Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի փաթեթավորմամբ (այդ թվում այն բացելուց հետո) 3 տարի է՝ փաթեթավորման հերմետիկության և պահման պայմանների պահպանման ժամանակ:

4. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, սնկասպան (Կանդիդա) և լվացող հատկություններով:

5. Ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՕՍՏ 12.1.007-76-ին համապատասխան, միջոցը պատկանում է քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին՝ ստամոքսի մեջ ներմուծվելիս և մաշկի վրա լցվելիս: Տեղային-գրգռող, մաշկային-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություն, կիրառման առաջարկվող ռեժիմներով միջոցի մոտ արտահայտված չեն: Աչքերի լորձաթաղանթների վրա լցվելիս առաջացնում է գրգռում:

6. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) օգտագործման համար, ինչպես նաև պալիատիվ խնամքի բաժանմունքներում և հաստատություններում, հոսպիսներում, բուժքույրական խնամքի բաժանմունքներում, տարեցների տուն-ինտերնատներում, առողջարաններում, պրոֆիլակտորիումներում, պանսիոնատներում, բնակչության կողմից՝ կենցաղում կիրառության համար: Միջոցը նախատեսված է ցանկացած տեսակի մաշկ ունեցող մարդկանց, այդ թվում տարեցների և երեխաների մարմնի մաշկի սանիտարական մշակման և մաքրման համար, առանց օճառի և ջրի օգտագործման: Առաջարկվում է գրգռման նախատրամադրվածություն ունեցող, այդ թվում անկողնային հիվանդների մաշկի մաքրման և խնամքի համար ամենօրյա խնամքի ժամանակ, պառկելախոցերի և հարվող վիճակների կանխարգելման համար: Սահմանափակում է մաշկի վարակների տարածումը:

Չեզոքացնում է հոտերը և խաչընդոտում դրանց առաջացմանը: Արդյունավետ հեռացնում է մաշկի չոր և դժվարլուծելի աղտոտվածությունները: Հարմար է հաճախ օգտագործման համար, այդ թվում անմիջապահության ժամանակ:

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

7. Անհրաժեշտության դեպքում մաշկից նախապես հեռացնել տեսանելի աղտոտվածությունները անձեռոցիկով:

8. Փրփուրառաջացնող կամ դոզավորող գլխադիրով սրվակով միջոցի օգտագործման ժամանակ՝

1) Սրվակի դնել ուղղահայաց,

2) սեղմել դոզավորող գլխադիրը մինչև միջոցի մասնաբաժնի առաջանալը, որը լցնում են ձեռքի վրա կամ անմիջապես մաշկի մշակվող մասի մակերեսի վրա կամ փափուկ անձեռոցիկի վրա,

3) զգուշորեն և մանրակրկիտ, առանց ներմերսելու տարածել միջոցը մաշկի մշակվող մակերեսի վրա, մինչև ամբողջությամբ խոնավանալը,

4) 30 վայրկյանից հետո միջոցի մնացորդները հեռացնել չոր կամ խոնավ անձեռոցիկով:

9. Միջոցով ներծծված անձեռոցիկների օգտագործման ժամանակ՝

1) բացել փաթեթավորումը և դուրս բերել անձեռոցիկը,

2) զգուշորեն և մանրակրկիտ առանց սեղմելու սրբել մաշկը անձեռոցիկով,

3) 30-60 վայրկյան հետո մաքրել միջոցի մնացորդները չոր կամ խոնավ անձեռոցիկով:

10. Միջոցի մնացորդները լվանալու անհրաժեշտություն չկա:

3. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

11. Միջոցը կիրառվում է միայն արտաքին օգտագործման համար:

12. Չի լցվում վերքերի և լորձաթաղանթների վրա:

13. Խուսափել միջոցն աչքերի մեջ լցվելուց:
14. Միջոցի սառեցման դեպքում հալեցումը իրականացվում է սենյակային ջերմաստիճանում առանց հարկադրական տաքացման: Օգտագործելուց առաջ՝ թափահարել:
15. Չօգտագործել նշված պիտանելիության ժամկետը լրանալուց հետո:
16. Չնոսրացված վիճակում չլցնել կոյուղու և ձկնաբուծական տնտեսությունների ջրամբարների մեջ:

4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

17. Միջոցն աչքերի մեջ պատահական լցվելու դեպքում՝ անհրաժեշտ է աչքերը լվանալ հոսող ջրով և կաթեցնել 1-2 կաթիլ նատրիումի սուլֆացիլի 30%-ոց լուծույթ:
18. Միջոցը ստամոքսի մեջ պատահական ընկնելու դեպքում իրականացվում են ստամոքսի լվացում սենյակային ջերմաստիճանի ջրով և առաջացնում փսխում: Այնուհետև տուժածին խմեցնել մի քանի բաժակ ջուր ադսորբենտի (10-15 հաբ մանրացված ակտիվացված ածուխ մեկ բաժակին) ավելացմամբ:
19. Մաշկի վրա գրգռման առաջացման ժամանակ դադարեցնել միջոցի կիրառումը:
20. Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

5. ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

21. Միջոցի փոխադրումն իրականացվում է տրանսպորտի բոլոր տեսակներով՝ տրանսպորտի տվյալ տեսակի համար գործող և միջոցի ու տարայի անվնասությունը երաշխավորող դյուրավառ հեղուկների փոխադրման կանոններին համապատասխան:
22. Վթարային իրավիճակներում միջոցի մեծ քանակության պատահական թափվելու ժամանակ վրան լցվում է սորբենտ (ավազ, հող, թեփ), հավաքվում կափարիչով տարայի մեջ հետագա օգտահանման համար: Աշխատանքների ժամանակ

ձեռքերը պաշտպանվում են ռետինե ձեռնոցով, աչքերը՝ պաշպանիչ ակնոցով: Միջոցի մնացորդները լվացվում են մեծ քանակությամբ ջրով:

23. Միջոցը պահում են արտադրողի փակ փաթեթավորմամբ, դեղերից ու սննդամթերքից առանձին, երեխաների համար անհասանելի տեղերում, $+5^{\circ}\text{C}$ -ից մինչև $+25^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, տաքացուցիչ սարքերից և արևի ուղիղ ճառագայթներից հեռու:

24. Արտաքին միջավայրի պաշտպանության միջոցառումներ. Չի թույլատրվում միջոցի չնոսրացված վիճակում թափանցումը մակերեսային և ստորգետնյա ջրերի և կոյուղու մեջ:

25. Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի փաթեթավորմամբ (այդ թվում այն բացելուց հետո) 3 տարի է՝ միջոցի փաթեթավորման հերմետիկությունը և պահման պայմանները պահպանելու դեպքում:

6. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

26. Ըստ որակի ցուցանիշների՝ միջոցը կիրառման համար պատրաստի հեղուկի տեսքով համապատասխանում է սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված պահանջներին ու նորմաներին:

Աղյուսակ 1

Միջոցի որակի ցուցանիշներ

(թողարկման ձևը՝ կիրառման համար պատրաստի հեղուկ)

Ցուցանիշ	Նորմա
Արտաքին տեսք, գույն, հոտ	Անգույնից մինչև բաց դեղին գույնի, թեթև բնորոշ հոտով, կիրառման համար պատրաստի, առանց կողմնակի խառնուրդների, համասեռ միաֆազ լուծույթ
Խտությունը 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	1,030±0,020
Միջոցի 10 %-ոց լուծույթի ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ, pH	6,0±0,5
2-ֆենօքսիէթանոլի զանգվածային բաժին , %	0,4±0,05

Աղյուսակ 2

Միջոցի որակի ցուցանիշներ

(թողարկման ձևը՝ միջոցով ներծծված անձեռոցիկ)

Ցուցանիշ	Նորմա
Արտաքին տեսք, գույն, հոտ	10×10 սմ-ից մինչև 20×20 սմ չափերի, անգույն կամ բաց-դեղին գույնի, թեթև բնորոշ հոտով միջոցով ներծծված, ոչ գործվածքային անձեռոցիկ

Անձեռոցիկում ներծծված նյութի զանգվածը, գ	10,0±1,0
2-ֆենօքսիէթանոլի զանգվածային բաժին , %	0,4±0,05

27. Միջոցի արտաքին տեսքն ու գույնը որոշում են ակնադիտորեն, հոտը գնահատում են օրգանոլեպտիկ մեթոդով՝ ըստ ԳՕՍՏ 29188.0-2014: Դրա համար 30-32 մմ ներքին տրամագծով անգույն ապակույց փորձանոթի մեջ լցնում են միջոցը մինչև կեսը և դիտում են արտացոլված կամ անցողիկ լույսի տակ:

28. Անձեռոցիկի արտաքին տեսքն ու գույնը որոշում են ակնադիտորեն, հոտը որոշում են օրգանոլեպտիկ մեթոդով:

29. Ներծծման լուծույթի զանգվածի որոշում.

1) Սարքավորումներ, ռեակտիվներ և նյութեր.

ա. Կշեռք լաբորատոր ընդհանուր նշանակության ճշգրտության 2 դաս, ըստ ԳՕՍՏ P 53228 200 գ կշռման առավելագույն սահմանով,

բ. բյուքս CB 34/12 ըստ ԳՕՍՏ 25336-82,

գ. Ունելի,

դ. էլեկտրական չորացնող պահարան՝ $50\pm 5^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի միջակայքը պահպանելու համար:

2) Որոշման իրականացում. Անձեռոցիկն ունելիով հանում են անմիջապես փաթեթավորումը բացելուց հետո և տեղավորում նախապես կշռված բյուքսի մեջ: Որոշում են բյուքսի զանգվածը անձեռոցիկով: Անձեռոցիկը չորացնում են նախ օդում, ապա չորացման պահարանում $50\pm 5^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում մինչև հիմնական զանգվածը, որից հետո կրկին որոշում բյուքսի զանգվածը անձեռոցիկով: Կշռման ճշգրտությունը՝ մինչև 0.01 գ:

3) Արդյունքների մշակում.

Ներծծող լուծույթի զանգվածը (M) որոշում են հետևյալ բանաձևով.

$$M=m_1 - m_2 , \text{ որտեղ}$$

M – ներծծող լուծույթի զանգված, գ,

m_1 – բյուքսի զանգվածն է անձեռոցիկով մինչև չորացումը, գ,

m_2 – բյուքսի զանվածն է անձեռոցիկով չորացումից հետո, գ:

4) Որպես հետազոտության արդյունք ընդունում են 5 անձեռոցիկների փորձարկումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չեն գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 2%-ի:

30. Խտության որոշում 20°C ջերմաստիճանում: Խտությունը 20°C ջերմաստիճանում որոշում են համաձայն ԳՕՍՏ 18995.1:

31. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի, միջոցի pH-ի որոշում: Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը (pH) որոշում են 10 % զանգվածային բաժնով միջոցի ջրային լուծույթում: Որոշումն իրականացվում է պոտենցիոմետրիկ մեթոդով ըստ ԳՕՍՏ 50550-ի կամ ստորև ներկայացվող մեթոդաբանությամբ:

1) Սարքավորումներ, ռեակտիվներ, նյութեր.

ա. ցանկացած մակնիշի pH-մետր՝ 0.1 միավ. չգերազանցող սխալանքով,
բ. 50 սմ^3 տարողությամբ ապակե բաժակ՝ ըստ ԳՕՍՏ 25336-82:

2) Փորձարկման իրականացում. Բաժակի մեջ լցնում են միջոցի 10%-անոց ջրային լուծույթ ($30\text{--}40\text{ սմ}^3$ ծավալով) և pH-մետրով չափում ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը՝ համաձայն սարքի հրահանգի:

32. 2-ֆենօքսիէթանոլի զանգվածային բաժնի որոշում: 2 - ֆենօքսիէթանոլի զանգվածային բաժնի որոշումն իրականացվում է բարձր արդյունավետության հեղուկ քրոմատոգրաֆիայի ՈՒՄ-դետեկտորի և քրոմատոգրաֆիկ իզոկրատիկ ռեժիմով՝ ներքին էտալոնի մեթոդով:

1) Սարքավորումներ, նյութեր և ռեակտիվներ.

– Անալիտիկ հեղուկային քրոմատոգրաֆ ՈՒՄ-դետեկտորով, 10 մկլ ներարկչային չափաբաժիններով օղակներով, հազեցած համակարգչի վրա քրոմատոգրաֆիկ տվյալների հավաքման, մշակման կառավարման սարքավորմամբ:

– - մազանոթային սյունակ (250×4 մմ), լցված Նուկլեոսիլ C18 (10 մկմ) սորբենտով,

– լաբորատոր կշեռք ընդհանուր նշանակության 2-րդ դասի, 200 գր կշռման առավելագույն սահմանով,

– թաղանթային ֆիլտր Սարտորիուս 100-N-25, ծակոտիների չափսը 0,45 մկմ,

- չափիչ կոլբաներ 100 սմ³ տարողությամբ, ըստ ԳՈՍ 1770-74,
- կաթոցիկներ 5 սմ³ տարողությամբ ըստ ԳՈՍ 29169,
- 2-ֆենօքսիէտանոլ–CAS 122-99-6 (արտ. առնվազն 99 %)՝ անալիտիկ ստանդարտ,
- դիբութիլֆտալատ մ.ա.հ. ըստ ՏՈՒ ԿՕՄՊ 2-213-10 (մ.դ. առնվազն 99 %), նյութ՝ ներքին էտալոն,
- ացետոնիտրիլ ԲԷՀՔ որակավորման ըստ ՏՈՒ 6-09-3534,
- ֆոսֆորական թթու ք.մ. ըստ ԳՕՍ 6552-80, 1% ջրային լուծույթ,
- Կրկնակի թորած ջուր:

2) Էյուենտի և աստիճանավորման խառնուրդների պատրաստում:

ա. Էյուենտի պատրաստում. 1000 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 680 մլ ացետոնիտրիլ և ավելացնում 1%-անոց ֆոսֆորական թթու մինչև 1000 մլ, կիրառումից առաջ լուծույթը դեգազացվում է:

բ. Հիմնական աստիճանավորման խառնուրդի պատրաստում. 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցվում է 0,04 գ 2-ֆենօքսիէթանոլ կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշը, լուծում են մոտավորապես 50 մլ էյուենտ, այնուհետև ավելացնում էյուենտը մինչև նիշը:

գ. Ներքին էտալոնով աշխատանքային աստիճանավորման խառնուրդի պատրաստում. 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են մոտավորապես 0,1 գ դիբութիլֆտալատ (նյութ՝ ներքին էտալոն), կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշի ճշտությամբ, ապա կաթոցիկի օգնությամբ ավելացվում է 5 սմ³ հիմնական աստիճանավորման խառնուրդ և էյուենտով հասցնում մինչև նիշը: Խառնելուց հետո ֆիլտրում են թաղանթային ֆիլտրով և 10 մլլ աշխատանքային աստիճանավորման խառնուրդ ներմուծում քրոմատոգրաֆի մեջ: Լուծույթը քրոմատոգրաֆում են առնվազն 3 անգամ: Որպես հետազոտության արդյունք ընդունվում է միջին ցուցանիշը: Աշխատանքային աստիճանավորման խառնուրդի ստացված քրոմատոգրամներից որոշում են պահման ժամանակահատվածը և 2-ֆենօքսիէտանոլ և դիբութիլֆտալատի (նյութը-ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսները, հաշվում աստիճանավորման գործակիցը որոշվող նյութի համար դիբութիլֆտալատի նկատմամբ:

3) Քրոմատոգրաֆման պայմաններ.

ա. էյլունտ՝ ացետոնիտրիլ և ֆոսֆորական թթվի 0,1 %-անոց լուծույթ 68:32 ծավալային հարաբերակցությամբ,

բ. էյլունտի հոսքի արագություն – 1 մլ/րոպե,

գ. Ալիքի երկարությունը 278 նմ,

դ. Ներմուծվող չափաբաժնի ծավալը – 10 մկլ:

ե. 2-ֆենօքսիէթանոլի մոտավոր պահաժամը 1,97 ռոպե, դիբութիլֆտալատինը՝ 4,47 ռոպե: Քրոմատոգրաֆման պայմանները կարող են փոփոխվել սահմանված բաղադրիչների առավել արդյունավետ տարանջատման հասնելու համար:

4) Հետազոտության իրականացում. 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ ավելացվում է 0,5 գ միջոց և 0,1 գ դիբութիլֆտալատ, կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշի ճշտությամբ, հասցնում են միջև նիշը էյլունտով: Խառնելուց հետո լուծույթը ֆիլտրում են թաղանթային ֆիլտրով և ներմուծում 10 մկլ ֆիլտրատ: Լուծույթը քրոմատոգրաֆում են առնվազն 3 անգամ: Որպես հետազոտության արդյունք ընդունվում է միջին ցուցանիշը: Ստացված քրոմատոգրամներից որոշվում է 2-ֆենօքսիէթանոլի և դիբութիլֆտալատի (նյութ՝ ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսները հետազոտվող նմուշում:

5) Արդյունքների մշակում. 2-ֆենօքսիէթանոլի զանգվածային բաժինը (X, %) միջոցի մեջ հաշվում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{K \cdot S \cdot M_{էտ}}{S_{էտ} \cdot m} \cdot 100, \text{ որտեղ՝}$$

S և S_{էտ} - աշխատանքային ավարտական լուծույթում 2-ֆենօքսիէթանոլի և դիբութիլֆտալատի քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսներն են հետազոտվող նմուշում, M_{էտ} - դիբութիլֆտալատի զանգվածն է, ներմուծված հետազոտվող նմուշի մեջ, գ, m-միջոցի զանգվածն է, գ,

K - հարաբերական աստիճանավորման գործակիցն է 2-ֆենօքսիէթանոլի համար:

6) K – հարաբերական աստիճանավորման գործակիցը 2-ֆենօքսիէթանոլի համար հաշվում են հետևյալ բանաձևով.

$$K = \frac{M \cdot S_{t_{\text{տ}}}}{M_{t_{\text{տ}}} \cdot S}, \text{ որտեղ.}$$

S և $S_{t_{\text{տ}}}$ - 2-ֆենոքսիէտանոլի և դիբուֆիլֆտալատի (նյութ՝ ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսներն են աշխատանքային աստիճանավորման խառնուրդում,

M և $M_{t_{\text{տ}}}$ - 2-ֆենոքսիէտանոլի և դիբուֆիլֆտալատի զանգվածներն են, աշխատանքային աստիճանավորման խառնուրդում, գ:

33. Որպես արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև թույլատրելի տարբերությունը չի գերազանցում 10 %-ը: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4 \%$ ՝ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում: